ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԻ ՀԵՏ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆ ԻՆՁ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԷՐ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՏԵՂՍ...»

Թբիլիսիի թիվ 104 հայկական հանրային դպրոցում ուսումնական տարեսկզբից պարզորոշ դարձավ ուրախալի մի փաստ. դպրոցում բացվում էր երկու առաջին դասարան: Այսօր դպրոցն ունի 32 առաջին դասարանցի: Ասել է թե, շատերս վերջապես գիտակցում ենք, որ սովորող երեխան կամ հետեւողական ծնողը նույն արդյունքն են տալիս թե՛ հայկական, թե՛ ռուսական եւ թե՛ վրացական դպրոցում:

Թիվ 104 դպրոցն իր կենսագրականում միշտ հպարտության արժանի շրջանավարտներ է ունեցել: Ներկայացնում ենք նմաններից մեկին՝ Թբիլիսիի Սեւծովյան միջազգային համալսարանի, Լոնդոնի համալսարանական քոլեջի, Բուդապեշտի Կորվինիուսի համալսարանի տնտեսագիտության ու բիզնեսի մագիստրատուրայի շրջանավարտ ԱՆՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ (2003-2004 ուստարվա շրջանավարտ): Այդով ցանկանում ենք ոչ միայն կիսել Անրիի հաջողությունների բերկրանքը, այլեւ մեկ անգամ եւս քանդել այն թյուր կարծրատիպը, թե հայկական դպրոցը, իբր, հետ է մյուսներից:

- Անրի, պատմիր քո մասին, ովքե՞ր են ծնողներդ...

- Մայրս Հավլաբարի թիվ 93 հայկական դպրոցն է ավարտել: Հայրս հայ է, բայց հայերեն չգիտի, տատս վրացուհի է: Մեր ընտանիքը եռալեզու է եղել, բայց մորս շնորհիվ միշտ զգացել եմ, որ հայերենը դոմինանտ լեզու է: Մինչեւ ութերորդ դասարան սովորել եմ թիվ 109, իսկ ութերորդից՝ թիվ 104 դպրոցում:

Հայրս հայերեն բոլորովին չգիտեր, ուզում էր, որ գոնե ես հայերեն իմանայի, եւ «դիմադրեց» իր վրացական կողմին, որը, բնականաբար, ինձ ուզում էր տեսնել վրացական դպրոցում...

- Ովքե՞ր էին ուսուցիչներդ, ո՞րն էր հաջողությանդ գրավականը:

- Ուսուցիչներիցս շատերին կուզեի թվարկել... Վերջերս պատահաբար հիշեցի, որ ռուսերենի ուսուցչուհիս՝ Ռոզա Միխայլովնան, մեզ պատմել էր ռուս գրող Գոնչարովի Օբլոմովի մասին: Չալարեցի ու կարդացի, որ հասկանայի, թե ինչո՞ւ էր ուսուցչուհիս այն ժամանակ պատմում այդ գրքի մասին: Լավ ուսուցիչը այնպես է մատուցելու նյութը, որ երեսուն ու հիսուն տարեկանում էլ պատահաբար հիշես ու սկսես փորփրել ավելին իմանալու նպատակով, որովհետեւ դաս ասածը իրականում դպրոցում չի ավարտվում, նույն դասը հետո էլ է շարունակվում: Իսկ հաջողության գրավականը ի սկզբանե հետաքրքրասեր լինելն է. սկսում ես ամեն ինչ կլանել, հետեւաբար՝ աճել:

- Վրաստանում ապրողներիս առավելությունն է տիրապետել մի քանի լեզուների, դու քանի՞ լեզու գիտես...

- Չորս: Ու դրանցից յուրաքանչյուրը՝ հաջողության մի-մի բանալի: Լոնդոնի համալսարանում սկսեցի սովորել հունգարերեն: Կարծում եմ՝ ցանկացած նոր լեզու նոր մտածողություն է բերում ու նոր գրականություն: Սեւծովյան համալսարանում երկու տարի թուրքերենն եմ ուսումնասիրել ու շատ եմ ափսոսում, որ այլեւս չեմ հիշում: Հիմա էլ փորձում եմ հունգարերենս փրկել:

- Շատերի ծնողները երեխաներին հայկական դպրոց չեն տանում՝ պատճառաբանելով, որ հետո, «կարող է պատահի՝ ընտանիքով Ռուսաստան տեղափոխվեն»... դու այդ ինչպե՞ս Լոնդոն, հետո էլ՝ Բուդապեշտ հասար:

- Մի պահ եկավ, երբ ձանձրացա ինքս ինձնից ու որոշեցի աշխարհը տեսնել: Վստահ էի, որ դրսում արկածներ են ինձ սպասում, ու արդյունքում՝ լիքը բան կհաղթահարեմ մեջս, կփոխվեմ: Չէի սխալվել: Թբիլիսիի Սեւծովյան մասնավոր համալսարանի շրջանավարտս, 2012-ին ընդունվեցի Լոնդոնի համալսարանական քոլեջի տնտեսագիտության ու բիզնեսի մագիստրատուրա: Նույն ծրագրով ուսումս շարունակեցի Բուդապեշտի Կորվինիուսի համալսարանում:

- Ստեղծագործում ես՝ տնտեսագիտությանը հատուկ չոր թվերին ու սթափ մտածողությանը հակադրվելով...

- Աշխատավայրումս գրականությունը վախենալու չափ հեռու ու օտար է թվում ինձ: Նայում եմ ընկերությունում վազվզող կամ համակարգիչների մեջ խորասուզված աշխատակիցներիս ու մտածում՝ տեսնես գրականությո՞ւնն է մեռած նրանց, թե՞ նրանք՝ գրականության համար: Երեւի բարդացնում եմ կամ այնքան եմ սիրում գիրքը, որ ինձ թվում է՝ բոլորի համար դա պիտի ամենակարեւորը լինի: Մեկ-մեկ ընկճվում եմ, մտածում, որ այլեւս երբեք չեմ կարողանա գրել: Բայց հենց վերադառնում եմ գրականություն, սկսում եմ մինչ այդ ինձնից թաքնված անկյուններից նայել երեւույթներին: Այսինքն, ամեն վերադարձին մի նոր բան եմ հետս բերում: Ուրեմն, տարբեր իրականությունների մեջ լինելն էլ իր առավելություններն ունի:

- Ի՞նչ է առհասարակ գիրքը քեզ համար:

- Գիրքն ինձ համար մարդուց մարդ ցատկելու, ամեն տեղ լինելու, մերկանալու ու մերկացնելու միջոց է:

- Կպատմե՞ս գրականության մեջ առաջին քայլերիդ մասին:

- Վեցերորդ դասարանից Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության «Գրական ծիլեր» ակումբի անդամ էի: Հետո դարձա «Վերնատուն» միության անդամ: Միշտ կարեւորում էի Ժորա Սնխչյանի կարծիքը:

Պատմվածքներիս առաջին ժողովածուն՝ «Վայրկյանները», լույս տեսավ 2010-ին, Թբիլիսիում, Անահիտ Բոստանջյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ: Այն ինձ համար ավելի շատ կարեւոր է տիկին Անահիտի հետ աշխատելու փաստի համար: Առհասարակ, տիկին Անահիտն ինձ թույլ էր տալիս շատ սխալվել, իհարկե, հարցը ուղղագրական սխալների մասին չէ (ինչը ոչ ոքի չէր ներում): Սկզբում նա շատ էր ինձ ուղղում, նշում իմ թույլ կողմերը, խորհուրդներ ու ուղղություն տալիս, ասում, որ շատ կարդամ ու կարդամ ամեն ինչ: Հետո սկսեց ավելի շատ երես տալ ինձ: Հիմա եմ հասկանում. ուզում էր, որ ինքս զգայի ազատության չափերը, հարմարվեի ազատությանը կամ ազատությունը հարմարեցնեի ինձ, ինքնուրույն տեղավորվեի թույլատրելիների ու անթույլատրելիների մեջ: Տիկին Անահիտից հետո ես ինձ մենակ զգացի գրականության մեջ: Առաջ ենթագիտակցորեն հասկանում էի, որ կա տիկին Անահիտը, ով ճիշտ պահին ինձ կուղղի, կվերադարձնի, վերջապես՝ կպաշտպանի: Ինքը հիմա էլ կա, որովհետեւ հիմա հիշում եմ նրա խրատները: Ու ինձ մեկ-մեկ թվում է՝ նրա ասածներից մի կարեւոր բան բաց եմ թողել, մոռացել, անընդհատ փորձում եմ հիշել: Կամ գուցե չհասցրեց ասել ինձ, ու մի օր հասկանամ, թե ինչ կուզեր ասել ինձ:

Պատմվածքներիս երկրորդ ժողովածուն այս տարի լույս է տեսնելու Երեւանում՝ «Դմբո Ջոյս» վերնագրով:

- Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահի՝ Անահիտ Բոստանջյանի երաշխավորությամբ ընդունված Վրաստանի գրողների միության միակ անդամն ես...

- Ինձ միշտ վախեցնում էր, որ տիկին Անահիտը հույսեր էր կապում ինձ հետ: Մեծ պատասխանատվություն է, որ չգիտես՝ ինչպե՞ս կրես: Երեւի, դու էլ նույնն ես զգում: Հիմա մոլորված եմ, որովհետեւ տիկին Անահիտի հետ կապված ցավը դեռ թարմ է, նրա լույսը, նրա էներգիան, նրա արագությունը պակասում է բոլորիս, ու չեմ կարող որեւէ բան ասել: Բայց, իհարկե, առաջին հերթին պիտի շարունակենք «Կամուրջը»:

- Ինքդ՝ առավել քան համեստ ու չխոսկան, գիրդ՝ համարձակ, բաց, անմիջական ու աշխույժ, այդ ինչպե՞ս...

- Շատերն են ինձ չխոսկան ու համեստ համարում: Երեւի ինքս եմ սկզբից ինձ այդպես մատուցել: Կամ էլ հայ ու վրաց մշակույթների մեջ խցկված՝ նախընտրեցի լռել: Հետո սկսեցի ընդվզել դրա դեմ, ապացուցել, որ իրականում այդպիսին չեմ (բայց ո՞վ բանի տեղ դրեց իմ ընդվզումները): Ու երեւի դրա համար էլ ինքնին այնպես ստացվեց, որ, որպես գրող, անհամեստ դուրս եկա: Բայց կարծում եմ՝ գրողը պիտի կարողանա իր տեքստի մեջ լինել ցանկացած մեկը, խոսի ցանկացած լեզվով:

- Այս պահին մասնագիտական հմտություններդ կիրառելու լայն հնարավորություններ ունես, դժվար չէ՞ր օտար երկրում աշխատանքի տեղավորվել:

- Մրցակցությունն արտասահմանի աշխատաշուկայում շատ բարձր է: Դրան ավելանում է նաեւ, որ դու աշխատելու իրավունք չունես Եվրոպայում, ու գործատուն կարող է իսկույն մերժել քեզ, որովհետեւ չի ուզում քեզ համար աշխատանքի իրավունք ձեռք բերելու գործընթացի միջով անցնել: Կարծում եմ, ձեռքբերումներիցս մեկն է, որ այսօր Բուդապեշտում «Շնեյդեր էլեկտրիկ» ընկերության տնտեսական ռիսկերի վերլուծաբանն եմ: Բազմամշակութային միջավայր է: Մեր ընկերությունում քսան լեզվով են խոսում: Ի դեպ, բազմամշակութային միջավայրը մի առավելություն ունի՝ յուրաքանչյուր ազգի ներկայացուցիչ ձգտում է իր լավագույն հատկանիշները ցույց տալ, իր ազգին բնորոշ բացասական կողմերը թաքցնել:

- Ամուսնացել ես ու լավ ես արել, մշտանորոգ սեր ձեզ, ո՞վ է ընտրյալդ...

- Գիտե՞ս, միշտ ուզեցել եմ օտարերկրացի կին ունենալ կամ գոնե ընկերուհի, երազել եմ, ձգտել դրան, ասենք՝ իսպանուհի, անգլուհի, հունգարուհի: Բայց միշտ հայուհիների եմ սիրահարվել: Հասկացա, որ միայն հայերեն կարող եմ սիրել ու հաշտվեցի այդ իմ «հայկական անեծքի» հետ: Կինս Հայաստանից է: Բուդապեշտում ասպիրանտ է, մասնագիտությամբ՝ միջնադարագետ:

- Ապագայի քո մտորումները, նաեւ ուղերձը երիտասարդներին՝ ապագա տնտեսագետներին, գրողներին եւ կամ...

- Չեմ կարծում, որ երիտասարդ գրողները կամ տնտեսագետները ուղերձի կարիք ունեն: Մի անգամ տանը փորփրում էի հորս ռուսալեզու գրքերը: Մի հաստափոր գիրք գտա Հայրենական մեծ պատերազմի մասին՝ «Բեռլին» վերնագրով: Կազմի ներսում վետերան պապս, ում արդեն չեմ էլ հիշում, ռուսերեն գրել է. «Թոռնիկիս՝ Անրիին, կմեծանաս, կկարդաս ու կիմանաս, թե ուր է եղել պապդ»: Միշտ մտածել եմ, թե ինչու պապս, օրինակ, մի ուղերձ կամ մաղթանք չի թողել ինձ, այլ ընդամենը ուզեցել է, որ իմանամ, թե ուր է հասել ինքը պատերազմի տարիներին: Երեւի հասկանում էր, որ ցանկացած ուղերձի դեմ կընդվզեի: Իրոք կընդվզեի: Կամ գուցե դրա մեջ կոդավորած ուղե՞րձ կար ինձ: Դեռ չեմ կարդացել այդ գիրքը: Դեռ պատրաստ չեմ:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

TBC

TBC ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՎԵՐՆԵՐ

Նորտարյա տոնակատարության մոտեցման կապակցությամբ TBC բանկը նոր ակցիա է սկսում: Նոյեմբերի 13-ից սպառողները կարող են օգտվել բանկի ապահովագրական ծրագրի ապահովագրության հիանալի պայմաններից եւ ընտրել բացառիկ նվերներ:

Մինչեւ 300 լարի՝ ուղեւորության վաուչեր կամ շուրջ 100 լիտր պրեմիում վառելանյութ:

Ողջ տարվա ընթացքում ապահովագրվածները նաեւ կօգտվեն բացառիկ բենեֆիտներից:

17 թեթրիանոց զեղչից՝ «Վիսսոլի» վառելանյութի հարցով:

50 տոկոսանոց զեղչից՝ գործընկեր լվացարաններում մեքենայի լվացման ժամանակ:

Ակցիային մասնակցելու եւ նվերների ստացման համար, սպառողները պետք է գնեն ավտոապահովագրության ողջ հավաքածուն, որը ներառում է ավտոմեքենայի ապահովագրությունը, ավտոպատասխանատվության ապահովագրությունը, դժբախտ պատահարից վարորդի եւ ուղեւորների ապահովագրությունը:

Ավտոապահովագրությունը հնարավոր է ձեռք բերել Վրաստանի ողջ մասշտաբով TBC բանկի ապահովագրական մասնաճյուղերում, TBC բանկի online.tbcinsunrace.ge կայք-էջում:

Նվերներից օգտվելը դյուրացված է: Ապահովագրվածը, ով կընտրի ուղեւորության վաուչերը, այն կարող է օգտագործել ցանկացած ուղղությամբ ինքնաթիռով ուղեւորության, հյուրանոցի կամ ճանապարհորդության ծրագրմանը TBC բակի ապահովագրական գործընկեր զբոսաշրջության «Թեմի Թրեւել» ընկերությունում:

Իսկ որպես նվեր վառելենյութից օգտվելը հնարավոր է «Վիսսոլի» բենզալցման կայանների ցանցում, Վրաստանի ողջ մասշտաբով:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

Ի՞ՆՉ ԱՐԺԵ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ

Հետաքրքիր է՝ այս աշխարհում, որտեղ ամեն ինչ առուծախի է վերածվել, հաշվարկվե՞լ է՝ որքա՞ն է կազմում անշարժ գույքի արժեքը:

Ա. Վարդանյան
Ախալքալաքի

Որքան էլ տարօրինակ թվա, նման հաշվարկ իսկապես կատարվել է: Աշխարհում անշարժ գույքի բոլոր օբյեկտների ընդհանուր արժեքը կազմում է 200 տրլն դոլար: Այդ մասին ասված է Savills բրիտանական ընկերության հետազոտության մեջ: Հաշվետվության համաձայն, համաշխարհային անշարժ գույքի ընդհանուր արժեքի 84 տոկոսը բաժին է ընկնում բնակելի անշարժ գույքին (168,5 տրլն դոլար), մնացածը կազմում է առեւտրային անշարժ գույքը:

Աշխարհում ամբողջ անշարժ գույքի 70 տոկոսից ավելին արժեքային արտահայտությամբ (141,5 տրլն դոլար) գտնվում է տասը երկրում՝ Չինաստանում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում, Հնդկաստանում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Բրազիլիայում, Իտալիայում եւ Ռուսաստանում:

Ցուցակի առաջին տեղում Չինաստանն է (42,7 տրլն դոլար), երկրորդում՝ ԱՄՆ-ը (42,1 տրլն դոլար): Ռուսաստանում ամբողջ անշարժ գույքի արժեքը կազմում է 3,6 տրլն դոլար, որից 2,9 տրլն դոլարը բնակելի անշարժ գույքն է: Նշվում է, որ արժեքային արտահայտությամբ Ռուսաստանի ամբողջ անշարժ գույքի մեկ երրորդը գտնվում է Մոսկվայում (870 մլրդ դոլար):

1855 թվականին հիմնված Savills-ն աշխարհի առաջատարներից մեկը անշարժ գույքի բնագավառում է:

ՕԳՏԱԿԱՐ Է

ԻՆՉՊԵ՞Ս ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀՈԳԵԿԱՆ ԴՐԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐ

Հոգեկան դրական որակներ զարգացնելու համար, առաջին հերթին, պետք է ճանաչեք ինքներդ ձեզ, այսինքն՝ կենտրոնանաք ձեր ուժեղ եւ, միաժամանակ, դրական կողմերի վրա:

Սա նշանակում է նաեւ, որ ստիպված եք ընդունել ձեր այն հատկանիշները, որոնք ի վիճակի չեք փոխել, եւ աշխատել այն հատկանիշների վերափոխման ուղղությամբ: Փորձեք նաեւ հետեւություն անել նախկինում ունեցած անհաջողություններից եւ թույլ տված սխալներից: Եթե դա հաջողվի, կտրուկ կնվազի դրանք կրկնելու հավանականությունը:

Հոգեկան առողջությունը բարելավելու մեկ այլ ճանապարհ էլ կա՝ ընդունել շրջապատի մարդկանց այնպիսին, ինչպիսին նրանք կան: Բոլորն էլ թերություններ ունեն, սակայն, բոլորի մեջ էլ հնարավոր է գտնել հիացմունքի արժանի գծեր: Սովորելով գտնել հենց այդ դրական որակները այլ մարդկանց մեջ՝ դուք նպաստում եք ձեր հոգեկան առողջության կատարելագործմանը:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ԱՇԽԱՐԻ 170 ԵՐԿԻՐ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՄԱՀԱՊԱՏԺԻՑ

Մահապատժից հրաժարված երկրների թիվը հասել է 170-ի, եւ պատժի առավելագույն չափի կիրառման հաստատված դեպքերի 87 տոկոսը բաժին է ընկնում չորս երկրի՝ Իրաք, Իրան, Պակիստան եւ Սաուդյան Արաբիա:

Այս տվյալները հրապարակել է ՄԱԿ-ը:

Հաղորդագրության մեջ նշված է, որ 2016 թվականին մահավճիռների թիվը, նախորդ տարվա համեմատ, կրճատվել է 37 տոկոսով: Ներկա դրությամբ, միայն չորս երկիր է պատասխանատվություն կրում գրանցված բոլոր մահապատիժների 87 տոկոսի համար: Խոսքը Իրանի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի եւ Պակիստանի մասին է: ՄԱԿ-ում նշում են նաեւ, որ մեծ թվով մահապատիժներ են իրականացվում Չինաստանում, սակայն «ստույգ տվյալներ չունեն» դրա վերաբերյալ:

Ներկայում ԱՄՆ-ը մնում է խոշորագույն այն երկիրը, ինչպես նաեւ միակ արեւմտյան պետությունը, որտեղ կյանքից զրկում են հանցագործներին: Մահապատիժը՝ որպես առավելագույն պատժաչափ, գործում է ԱՄՆ-ի 50 նահանգներից 31-ում: 1976 թվականից ի վեր, երկրում կյանքից զրկվել է 1,4 հազարից ավելի դատապարտյալ: Հետազոտողների տվյալներով, ընդամենը 17-րդ դարի սկզբից ժամանակակից ԱՄՆ-ի տարածքում մահապատժի է ենթարկվել ավելի քան 15 հազար մարդ:

ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒՄ

ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարսողությունը նման է շնչառության: Ներշնչելով՝ մեր մեջ ենք առնում շրջակա միջավայրը, ասիմիլացնում, ապա հետ ուղարկում այն, ինչը չի օգտագործվել: Նույնն էլ մարսողության դեպքում է կատարվում, չնայած այն սերտորեն կապված է օրգանիզմի նյութական մակարդակի հետ:



Օդը կառավարում է շնչառությունը, իսկ մարսողությունը ենթարկվում է իներտ տարրին՝ Հողին: Ուստի, շնչառությունից այն տարբերվում է խիստ ռիթմի բացակայությամբ՝ կլանման ու օգտակար նյութերի կորզման հերթագայության մեջ կորչում է հստակությունը:

Մարսողությունը շատ նման է ուղեղի գործունեությանը, ուղեղը (կամ գիտակցությունը) վերամշակում ու յուրացնում է այս աշխարհի ոչ նյութական տպավորությունները (ոչ միայն հացիվ), իսկ ստամոքսը՝ նյութականը:

Մարսողությունն արտաքին աշխարհի ներմուծումն է օրգանիզմ՝ նյութական տպավորությունների ձեւով: Այն ներառում է՝

- **այդ տպավորությունների բաժանումը «օգտակարի» ու «ոչ օգտակարի».**
- **օգտակար նյութերի ասիմիլյացիան, յուրացումը.**
- **«ախտածին» նյութերի դուրսբերումը:**

Իսկ ի՞նչ է խորհրդանշում սննդային նախապատվությունը: Պարզվում է, որ շատ բան կարելի է ասել ըստ մարդու սննդային նախասիրությունների:

Ամենահասարակ թվացող պատահական գործընթացներում երբեմն թաքուն փոխկապակցված երեւույթներ կան: Եթե մարդը ցանկանում է ուտել մի որեւէ բան, ապա դա հստակ որոշակի վիճակի արտահայտություն է: Իսկ եթե նա ինչ-որ բան չի հավանում, ապա դա եւս կարելի է բացատրել հոգեբանական ենթատեքստով:

Քաղցը խորհրդանշում է ունենալու, տիրելու ցանկություն, արտահայտում է որոշակի ագահություն, իսկ ուտելը ցանկության բավարարումն է ձեռքբերման ու կշտանալու միջոցով:

Եթե մարդը սիրո պակաս կամ քաղց ունի, եւ այն ցանկացածի պես չի բավարարվում, ապա մարմնական մակարդակում դա արտահայտվում է քաղցրի ձգտումով: Չափազանց քաղցրակերությունը միշտ սիրո չբավարարված պահանջի արտահայտությունն է: «Քաղցր» բառի երկակի նշանակությունն արտահայտվում է «քաղցրս» արտահայտության նման: Երեխաների շրջանում քաղցրի նկատմամբ սերը ծնողական սիրո անբավարարության նշան է, երեխաների համար ծնողների սերը միշտ քիչ է: Որոշ ծնողներ էլ կհակադարձեն, թե ամեն ինչ անում են նրանց համար, սակայն դա ամենեւին էլ նույնը չէ:

Եթե մարդն անընդհատ ինչ-որ համեղ բան ուտելու ցանկություն է ունենում, ապա հաստատ սիրո եւ ուշադրության պակաս է զգում:

Երբ ծնողները երեխաներին քաղցր են տալիս՝ ենթագիտակցորեն իրենց սերն ու վերաբերմունքը փոխհատուցում են դրանով:

Այն մարդիկ, որոնք շատ են մտածում կամ մտավոր գործ անում, աղի կամ հիմնավոր սննդի կարիք ունեն:

Պահպանողական մարդիկ նախընտրում են ապխտած սնունդ, թունդ թեյ (իսկ դրանք, որպես կանոն, դաբաղանյութեր պարունակող մթերքներ են):

Կծու մթերք են նախընտրում նոր տպավորություններ փնտրողները: Նրանք սիրում են նոր մարտահրավերներ, թեեւ միշտ չէ, որ դրանց պատրաստ են:

Հակառակ տեսակն էլ կա. մարդիկ կան, ովքեր նախընտրում են խնայող սնունդը, այսինքն՝ առանց աղի ու համեմունքների: Նրանք խնայում են իրենց, փորձում են հեռու մնալ նոր տպավորություններից, խուսափում են առճակատումներից ու ցանկացած «հարաբերությունների պարզաբանումից»: Այդ երկյուղը կարող է հանգեցնել միայն շիլաներով ու ապուրներով սնվելու իրողությանը, քանի որ նյարդերի պատճառով ստամոքսի ցավեր ու տարատեսակ խնդիրներ են առաջանում: Ի դեպ, շիլան մանկական կերակուր է համարվում, եւ մեծահասակների շիլաներով տարվելու ձգտումը կարող է ինչ-որ չափով մանկամտության մասին հուշել, այսինքն՝ նրանք ինչ-որ բան պարզելու, կարգի բերելու ունակ չեն կամ խուսափում են: Մարդկանց այս տեսակը գերադասում է միայն այն սնունդը, որը կարելի է պարզապես կուլ տալ, նրանք կծելու, կրծելու պրոցեսն ագրեսիվ երեւույթ են դիտում:

Չկան փուշը կուլ տալու երկյուղը խորհրդանշում է վախ ուրիշի ագրեսիվության հանդեպ:

Բայց կան նաեւ մարդիկ, ովքեր իրենք իրենց համար խնդիրներ են փնտրում ու ստեղծում: Նրանք սիրում են կոշտ սնունդն ու ցանկացած գնով փորձում են ամեն ինչի էության մեջ խորանալ: Այդ մարդիկ միշտ աչքի են ընկնում, քանի որ առանց խնդիրների ասես կյանքը կյանք չէ նրանց համար: Օրինակ՝ եթե նրանց աղանդեր է հրամցվում, նրանք անպայման պահանջում են ուտելու որեւէ բան, որ հնարավոր լինի կրծել, կծել: Դրանով նրանք ի ցույց են դնում վախը սիրո ու քնքշության հանդեպ, ավելի ճիշտ՝ վախն այն բարդությունների հանդեպ, որոնք սիրուց անբաժան են:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Եթե մի բարոյականություն գեղեցիկ չէ, նա բարոյական չէ:

ԱՎ.ԻՍԱՀԱԿՅԱՆ
(1875-1957)
Հայ բանաստեղծ, արձակագիր

Չեմ ցանկանում տանել երբեք ստրկական անարգանք:

Ն.ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ
(1817-1845)
Վրաց բանաստեղծ

Ամենից առաջ մի' կորցրու ինքնահարգանքը:

ՀԻՊՈԿՐԱՏ
(մ.թ.ա.460-մ.թ.ա.377)
Հին հույն բժիշկ, փիլիսոփա

Գորտը ոսկի գահից էլ կցատկի ճահճի մեջ:

ԼՈՒԿՐԵՑԻՈՍ
(Մ.թ.ա. 1-ին դար)
Հին հռոմեացի բանաստեղծ

Հիմարությունը, նույնիսկ հասնելով այն բանին, ինչին ծարավի էր, երբեք գոհ չի լինում:

ԷՐԻԽ ՄԱՐԻԱ ՌԵՄԱՐԿ
(1898-1970)
Գերմանացի գրող

Մեր ընտանիքը մեր ամրոցն է: Դա այն տեղն է, ուր մենք սողեսող հասնում ենք, որ կյանքի հասցրած վերքերն ամոքենք: Ընտանիքը խաղաղության ու սիրո մեր բույնն է, ուր մեզ համար միշտ տեղ կա: Պահպանեք ձեր ընտանիքը:

Մ.ԱՎԱԳՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ Հայտարարություն.

«Առանց կրթության աղջիկը փնտրում է աշխատանք՝ ըստ իր մասնագիտության»:

☺ Գիշեր է, ծով, դատարկ լողափ: Երկու հոգեբան հանգստանում, զարեջուր են խմում: Հանկարծ լսում են խեղդվող տղամարդու ձայն. «Օգնեցե՛ք. օգնեցե՛ք...»: Հոգեբաններից մեկն ասում է.

- Կարծես թե տղամարդը խնդիր ունի:

Երկրորդը պատասխանում է.

- Այո՛, բայց կարեւորն այն է, որ նա այդ մասին արդեն ասում է...

☺ - Պա՛պ, այսօր դպրոցում կրճատ ծնողական ժողով է:

- Ի՞նչ է նշանակում «կրճատ»:

- Ես, դու եւ տնօրենը:

☺ Ճանապարհին սատկած կատու է ընկած: Քառամյա որդին հարցնում է մորը.

- Վաաա՜յ, այս ի՞նչ է պատահել:

- Նա մահացել է եւ ուղեւորվել երկինք՝ Տեր Աստծու մոտ:

- Փաստորեն, Տեր Աստվածը նրան ետ է շպրտել...

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանում Հայաստանի մշակութային օրերի բացման կապակցությամբ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հրավերով, պաշտոնական պատվիրակության հետ, որի կազմում էին արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գեւորգյանը, մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը եւ այլ պաշտոնական անձինք, աշխատանքային այցով գտնվում էր Մոսկվայում:

Այցի շրջանակներում, Հայաստանի նախագահը հանդիպում ունեցավ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Երկու երկրների նախագահների առանձնազրույցից հետո, Սերժ Սարգսյանն ու Վլադիմիր Պուտինը, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, մասնակցեցին «Ռուսաստանում Հայաստանի մշակութային օրերի» պաշտոնական բացման հանդիսավոր արարողությանը: Այն նվիրված էր Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին եւ Հայաստանի ու Ռուսաստանի Դաշնության միջեւ Բարեկամության, համագործակցության ու փոխադարձ օգնության մասին պայմանագրի ստորագրման 20-ամյակին: Պատկերասրահում, Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունների ցուցադրության ժամանակ, Վլադիմիր Պուտինը Սերժ Սարգսյանին հանձնեց Միխայիլ Վռուբելի «Դեւը եւ հրեշտակը Թամարի հոգու հետ» վերականգնված նկարը:

Մոսկվայում Սերժ Սարգսյանն այցելեց նաեւ Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդարան եւ Սուրբ Պայծառակերպություն Մայր տաճար, դիտեց թեմի հիմնադրման 300-ամյակին նվիրված «Բիբլիական երկիր Հայաստան» խորագրով ցուցահանդեսը, այցելեց ժամանակակից հայկական խաչքարերի ցուցահանդես:

Հայաստանի մշակույթի օրերի շրջանակում, մշակութային միջոցառումներից բացի, անցկացվեցին կրթական, լուսավորչական միջոցառումներ՝ ընդգրկելով Ռուսաստանի տարբեր քաղաքներ: Դպրոցականների շրջանում անցկացվեց Տիգրան Պետրոսյանի անվան շախմատային մրցաշար:

100 ՄԻԼԻՈՆ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց 2017թ. հոկտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի կառավարության եւ Ռուսաստանի կառավարության միջեւ՝ Հայաստանի պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրի վավերացման օրենքի նախագծին:

Համաձայնագրի դրույթների հիման վրա, Հայաստանի պաշտպանության նախարարության եւ «Ռոսոբորոնէկսպորտ» ԲԲԸ միջեւ կստորագրվեն առանձին պայմանագրեր վերոնշյալ ժամանակակից սպառազինության եւ տեխնիկայի՝ Հայաստանին տրամադրելու կարգի, ժամկետների, այդ ռազմական տեխնիկայի կիրառմանը վերաբերող տեղեկատվության տրամադրման պայմանների, կողմերի պարտավորությունների, դրա նորոգման եւ տեխնիկական սպասարկման պարտավորությունների, ձեռքբերման համար վճարումների եւ այլ հարցերի վերաբերյալ:

Միաժամանակ, Հայաստանի կառավարությունը համաձայնագիրը վավերացնելու մասին Հայաստանի օրենքի նախագիծը համարեց անհետաձգելի:

Ռուսաստանի Դաշնության կառավարության հետ 2015թ. հունիսի 26-ին ստորագրվել էր սպառազինություն ձեռք բերելու համար 200 մլն դոլարի վարկային համաձայնագիր, որն այժմ գործում է:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎՈՒՄ Է, ՈՐ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՄԻԱՅՆ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԵՎ ԿՆՈՋ ՄԻՋԵՎ

Հայաստանի կառավարությունը փոփոխություններ կատարեց Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքում:

Փոփոխություններ կատարելը պայմանավորված է Հայաստանի նոր սահմանադրությամբ, քանի որ այն նորովի մի շարք կարգավորումներ է տվել, մասնավորապես, առաջին անգամ ամրագրվել է, որ ամուսնությունը կարող է կայանալ միայն կնոջ ու տղամարդու միջեւ:

Օրինագծով նախատեսվել է, որ երեխայի կարծիքը նրա տարիքի ու հասունության մակարդակին համապատասխան պետք է հաշվի առնվի երեխայի հետ կապված ցանկացած հարց լուծելիս: Ամրագրվում է նաեւ ծնողական իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանելու նպատակը: Կարգավորումներ են առաջարկվել նաեւ որդեգրության գործընթացում, որոնք բխում են Հայաստանի՝ միջազգային պայմանագրերում ստանձնած պարտավորություններից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻՆ

Հայաստանի կառավարությունը Հայաստանի Ազգային ժողովի 2017 թվականի ընտրություններում 3 եւ ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին եւ կուսակցությունների դաշինքներին կտրամադրի ֆինանսական աջակցություն:

«Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին» ծախսային ծրագրի գծով ճշտված գումարը կազմում է 100,9 մլն դրամ, որի դիմաց, ս.թ. հոկտեմբերի 24-ի դրությամբ, ֆինանսավորումը կազմում է 42,1 մլն դրամ՝ ըստ 2012 թվականի Ազգային ժողովի ընտրությունների համամասնական ընտրակարգով 3 եւ ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների ֆինանսավորման: Նշված ծրագրի գծով II կիսամյակի չբաշխված մնացորդը կազմում է 58,8 մլն դրամ:

Այդ գումարից Հայաստանի Հանրապետական կուսակցությանը կտրվի 30 միլիոն, «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքին՝ 17 միլիոն, «Ելք» կուսակցությունների դաշինքին՝ 4 միլիոն, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը՝ 4 միլիոն դրամ: Խորհրդարան չանցած «Հայկական վերածնունդ» կուսակցությունը կստանա 2 միլիոն դրամ:

ՆՎԱԶՈՒՄ Է 150-300 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԸ

Հայաստանի կառավարությունը Հարկային օրենսգրքում նախատեսում է փոփոխություն, որով 150-300 հազար դրամ աշխատավարձերի եկամտահարկը նվազելու է 2 տոկոսով, ներկայիս 28 տոկոսի փոխարեն՝ կազմելով 26 տոկոս:

Նախագծով առաջարկվում է Հայաստանի հարկային օրենսգրքով սահմանված՝ եկամտային հարկի 150 հազարից մինչեւ 2 մլն դրամը ներառյալ, հարկման բազայի միջակայքում ավելացնել նոր միջակայքեր՝ 150 հազարից մինչեւ 300 հազար դրամը ներառյալ եւ 300 հազարից մինչեւ 2 մլն դրամը ներառյալ միջակայքերը: Այդ միջակայքերի համար, համապատասխանաբար, սահմանվելու են եկամտահարկի 26 տոկոս եւ 28 տոկոս դրույքաչափերը, ներկայումս եկամտահարկի 150 հազարից մինչեւ 2 մլն դրամը ներառյալ հարկման բազայի միջակայքի համար սահմանված 28 տոկոսի փոխարեն:

Ըստ Հայաստանի ֆինանսների նախարարության, եկամտահարկի նոր դրույքաչափերի կիրառությունը ոչ միայն չի ավելացնելու պետական բյուջեի հարկային եկամուտները, այլ նաեւ հանգեցնելու է տարեկան շուրջ 3,8 մլրդ դրամի հարկային եկամուտների կորստի: Այսինքն, եկամտահարկի՝ Հայաստանի հարկային օրենսգրքով սահմանված դրույքաչափերի կիրառմամբ, կառավարությունը ոչ թե լուծելու է լրացուցիչ հարկային եկամուտներ ապահովելու, այլ՝ տնտեսագիտորեն առավել հիմնավորված եւ եկամուտների վերաբաշխման տեսանկյունից առավել արդարացի հարկման դրույքաչափեր կիրառելու խնդիր: Քանի որ եկամտահարկի՝ 2018 թվականի հունվարի 1-ից գործող դրույքաչափերի կիրառությունը ֆիզիկական անձանց հարկման համակարգը կդարձնի իրապես պրոգրեսիվ՝ դրանով իսկ պետությանը հնարավորություն ընձեռելով իրականացնել եկամուտների վերաբաշխման գործառույթը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովում նոյեմբերի 15-ին մեկնարկել են «Արցախի՝ 2018թ. պետական բյուջեի մասին» Արցախի օրենքի նախագծի նախնական քննարկումները, որին ներկա են եղել խորհրդարանի նախագահ Աշոտ Ղուլյանը, պետնախարար Արայիկ Հարությունյանը, պատգամավորներ, կառավարության անդամներ:

Ֆինանսների նախարար Գրիգորի Մարտիրոսյանը ներկայացրել է գալիք տարվա ֆինանսական գլխավոր փաստաթուղթը:

Արցախի Հանրապետության 2018թ. համախմբված պետական բյուջեն կկազմի եկամուտների գծով՝ 97 մլրդ 104 մլն, ծախսերի գծով՝ 101 մլրդ 404 մլն, դեֆիցիտը՝ 4 մլրդ 299 մլն դրամ:

Նոյեմբերի 20-ից պետական բյուջեի նախագծի քննարկումները կշարունակվեն մշտական հանձնաժողովներում:

ԶՅՈՒՐԱՅՎԱԾ ՎԻԶԱՅՈՎ ՌԵԺԻՄ՝ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Հայաստան այցելելիս՝ Հնդկաստանի քաղաքացիները կկարողանան մուտքի արտոնագիր ստանալ սահմանային անցակետերում՝ էլեկտրոնային վիզա համակարգով, կամ օտարերկրյա պետություններում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններում ու հյուպատոսական հիմնարկներում:

Որոշման նախագիծը նպատակ է հետապնդում ազատականացնել մուտքի վիզայի հետ կապված հարաբերություններ Հնդկաստանի հետ, այդ թվում՝ փոխադարձության հիման վրա:

2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Հնդկաստանից Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվն աճել է 168%-ով (2017թ. հունվարի 1-ից օգոստոսի 31-ը Հնդկաստանում Հայաստանի դեսպանությունը տրամադրել է 1695 Հայաստանի մուտքի արտոնագիր, որը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելի է 479-ով):

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԻՋԵԼ Է

Սեւանա լճի մակարդակը, նախորդ տարվա նոյեմբերի առաջին կեսի համեմատ, իջել է 4 սմ-ով:

Ինչպես տեղեկացրին Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության «Հայհիդրոմետ» ծառայությունից, 2017 թվականի առաջին կեսի դրությամբ, Սեւանա լիճը ծովի մակարդակից գտնվում է 1900մ 47սմ բարձրության վրա, նախորդ տարվա նոյեմբերի նույն ժամանակահատվածի 1900մ 51սմ նիշի դիմաց: Նույն աղբյուրի համաձայն, այս տարի Սեւանա լճից ոռոգման նպատակներով բաց է թողնվել 266 մլն 757 հազար խմ ջուր: Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է մուտք գործել 80 մլն 18 հազար, ստորերկրյա հոսքի ճանապարհով՝ 25 մլն 320 հազար խմ ջուր:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(17 նոյեմբերի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	483,50	487,00
ԵՎՐՈ	568,00	575,00
ՌՈՒԲԼԻ	7,96	8,16

Նոյեմբերի 10-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 2,0 դրամով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ



19.11.2017. Բարեկենդան Հիսնակաց Պահոց

Հիսնակը հիսնօրյա պահքի շրջան է, որը նախորդում է Աստվածահայտնության տոնին: Հիսնակաց Բարեկենդանը, 7 օրերի շարժականությամբ, նշվում է նոյեմբերի 15-ից մինչեւ 21-ը, այս տարի՝ նոյեմբերի 15-ին:

21.11.2017. Տոն՝ երեքամյա Սուրբ Աստվածածնի տաճարի ընծայման

Սուրբ Կույս Մարիամին նվիրված տոներից է երեքամյա Սուրբ Աստվածածնի տաճարին ընծայման տոնը, որը բոլոր քրիստոնեական եկեղեցիները ոգեկոչում են նոյեմբերի 21-ին:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՄԵՐ ՁՈՅԱՆ ՀՈԲԵԼՅԱՐ Է

Լրացավ «Վրաստան» թերթի խմբագրության երկարամյա աշխատակից, տեխնիկական քարտուղար Զոյա Հարությունյանի ծննդյան 70-ամյակը:

Զոյային անկրկնելի դարձնողը գուցե այն է, որ նրա հետ հեշտ է շփվելը: Խմբագրությունում աշխատելու 42 երկար ու ձիգ տարիների ընթացքում, որտեղ իր աշխատանքն սկսեց հեռատիպավարուհու համեստ սեղանից, նա նստել-կանգնել է տարբեր տարիքի ու բնավորության աշխատակիցների հետ եւ իր տարեց, թե երիտասարդ կոլեգայի համար կարողացել է լինել հավասարապես մատչելի ու սրտակից զրուցակից:

«Վրաստան» թերթի աշխատակազմը շնորհավորում է իր գործընկերոջը, մաղթում քաջառողջություն եւ հաջողություններ կյանքում:

ՀՆԷԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԸ ԿՀԱՆԱՉՎԻ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Վրաստանը, հնարավոր է, պաշտոնապես ճանաչվի գինեգործության հայրենիք: Այդ մասին տեղեկացնում է ամերիկյան Science գիտական ամսագիրը:

«Շատ ավելի վաղ, երբ Լիբանանից մինչեւ Լանցդոկ (Ֆրանսիա) տարածված խաղողի այգիները դարձան գինեգործության Մեքքան, այդ ոլորտն արդեն ծաղկում էր Վրաստանում: Վերջերս Վրաստանում հայտնաբերվել են Եվրասիայում գինու արտադրության ամենահին վկայությունները՝ գինու կոտրված շշերը, ինչը վկայում է, որ տարածաշրջանում ավելի քան 8000 տարի առաջ թողարկվում էր խաղողից թորած ըմպելիքը»,- նշված է ամսագրում:

Դա 1000 տարով գերազանցում է գինու արտադրության մասին բոլորի կողմից ընդունած ժամանակահատվածը: Սույն ենթադրությունը հիմնված է Թբիլիսիից 50 կմ հարավ, Շուլավերիում իրականացված պեղումների արդյունքների վրա: Այստեղ հայտնաբերվել են մեծ քանակությամբ խեցեգործական իրերի կտորտանքներ, որոնք, մասնագետների հավաստմամբ, կարասներ էին: Դրանցից մի քանիսը զարդարված են նախշերով, որոնք խաղող են հիշեցնում:

Հիշեցնենք, որ գինեգործության ամենավաղ վկայությունները հայտնաբերվել էին Իրանի Զագրոս լեռներում եւ թվագրվում էին մ.թ.ա. (մեր թվարկությունից առաջ) 5400-5000 թվականներով: 2011 թվականին Հայաստանի քարանձավում հայտնաբերվեցին խաղողի ճզմիչ եւ թորման ամաններ, որոնք ունեն շուրջ 6000 տարվա պատմություն:

Աշխարհում ամենահին գինին պատրաստում էին ոչ թե խաղողից, այլ բրնձից, մեղրից ու մրգերից: Դրա ապացույցները հայտնաբերվել էին Չինաստանում, եւ դրանք թվագրված են մ.թ.ա. 7000 թվականով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆՇԵՑԻՆ ՔԱՂԱՔԻ ՕՐԸ

Նոյեմբերի 12-ին Ախալքալաքին նշեց քաղաքի օրը:

Տոնական միջոցառումների շրջանակներում կայացավ համերգ Ախալքալաքիի գյուղերի պարային համույթների, ինչպես նաեւ քաղաքի «Ջավախք» համույթի, Աշուղական դպրոցի եւ «Մուրջի» վրացական համույթի, Երիտասարդական կենտրոնի պարային խմբերի մասնակցությամբ:

Իրենց ցուցահանդեսը բացեցին «Ախալքալաքիում գյուղերի զարգացման նոր մոտեցման խթանում» ծրագրի ներկայացուցիչները: Ախալքալաքիի «Ապագայի տունը» ցուցադրեց ձեռագործ աշխատանքներ՝ Ջավախեթիի տիկնիկը, ասեղնագործ եւ ուլունքներից պատրաստված ամենատարբեր աշխատանքներ:

Միջոցառումը վարում էր Ախալքալաքիի շրջանային վարչության մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Վալերի Ստելմաշովը: Միջոցառմանը ելույթ ունեցան սակրեբուլոյի նախկին նախագահ եւ այժմ պատգամավոր Համլետ Մովսիսյանը, նորընտիր քաղաքապետ Յուրիկ Հունանյանը:

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒ ՏԱՏԸ՝ ՄԶԻԱ ՕԵՐԵԹԵԼԻՆ

Կյանքի 85-րդ տարում վախճանվել է Մզիա Օերեթելին, Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլու տատը՝ մոր կողմից: Տիկին Մզիան՝ աշխատանքի, բժշկության եւ բնապահպանության գիտահետազոտական ինստիտուտի բազմամյա աշխատակցուհին, բժշկության դոկտոր-պրոֆեսոր էր, Վրաստանի նախականխիչ բժշկության ակադեմիայի ակադեմիկոս, «Պատվո» շքանշանի ասպետ:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Առավելագույն: 8.Պարզաջրել: 9.Ճանապարհի եզրը: 10.Որոշ մասով: 14.Ֆունտ: 18.Նողկալի, գարշելի: 20.Ծաղկաբույսի բազմացման օրգանը: 22.Շնչառական օրգան: 23.Ֆրանսիացի աստվածաբան, կաթոլիկ եկեղեցու ռեֆորմացիայի շարժման գործիչ ... Կալվին: 24.....-ֆիննական լեզվաընտանիք: 29.Մոտ, կիպ: 31.Տարածքի մեծությամբ երկրորդ աշխարհամասի բնակիչ: 33.Երես: 35.Լեզվի միավոր՝ հնչյուն կամ հնչյունախումբ, որ ունի իմաստ եւ ինքնուրույն գործածություն: 37.Դեպք, միջադեպ: 39.Հին ստրկատիրական պետություն Պարսից ծոցից հյուսիս, Կերքա եւ Կարուն գետերի ավազանում: 40.Ոչ մեծ լայնություն ունեցող: 41.Երկարության չափման միավոր: 42.Երեք խոզուկներից մեկը: 45.Ուլան Բատորի բնակիչ: 48.Զբոսնելու ծառուղի: 51.Զրվեժ Հայաստանում՝ համանուն գետի վրա: 52.Թատերագրական երկի կամ ներկայացման ամբողջական մաս: 53.Քողարկված, թաքնված: 54.Այլափոխված սերունդ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Անօգնական, խեղճ մարդ: 3.Աֆրիկյան եւ եվրոպական ռիթմերի խառնուրդ պար: 4.Պարեն: 5.Գայլասարդերի ընտանիքի մի քանի ներկայացուցիչների հավաքական անունը: 6.Թագավորական պաշտոնատար անձ վաղ միջնադարի Արեւմտյան Եվրոպայում: 7.Տաք, մտերմիկ: 11.Վրաց դիրիժոր, Վրաստանի ժողովրդական արտիստ ... Կավսաձե: 12.Հայ բարերար, ճարտարագետ ... Մանուկյան: 13.Կարկանդակ: 14.Գովասանք: 15.Հմուտ, ճարտար: 16.Նիշ, դրոշմ, հետք: 17.Տպավորիչ, ցնցող: 19.Հեղուկի չափման միավոր: 21.Թաղամաս Երեւանում: 25.Դիմահարդարում: 26.Դալար շիվ: 27.Աֆղանստանի բնակիչ: 28.Նուշ: 30.Այբուբենի առանձին, որոշակի գրանշան: 32.Օրվա մաս: 34.Արագավազ որսի շուն: 35.Ուկրաինական կսմիթային երաժշտական գործիք: 36.Դիմելաձեւ տարեցին: 38.Հովհ.Թումանյան, «... ու ծառան»: 43.Սիրախաղ, սիրակատակ: 44.Գնչու: 46.Բակլաազգիների ընտանիքին պատկանող բույս: 47.Մունջ, համր: 48.Բուսապատ աղյուսաձեւ կտրած հողակտոր: 49.Մարդու ձեռքի հինգ վերջավորություններից յուրաքանչյուրը: 50.Ափսե, սկուտեղ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ճամփորդ: 4. Կորյուն: 9.Խլահավ: 11.Շերաթոն: 13.Լալվար: 15.Ալազանի: 17.Կկու: 18.Եթե: 19.Արենի: 21.Ար: 22.Քնար: 24.Սոս: 25.Նորք: 26.Արարք: 28.Ենք: 31.Դանթե: 33.Ղարիբ: 34.Համլիկ: 35.Որ: 38.Շուստով: 39.Նստենք: 40.Ելենա: 42.Վահե: 45.Արա: 46.Հոմերոս: 49.Զառ: 50.Արեւ: 51.Շա: 52.Արդ: 53.Մրոտել: 54.Ինն: 55.Դը:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ագաթա: 3.Փշալար: 5.Յոթվերք: 6.Նանսեն: 7.Սխրանք: 8.Մշակ: 10.Վանեսա: 12.Երկինք: 14.Լինոր: 16.Զարե: 20.Իսահակ: 21.Արշակ: 23.Նոնա: 27.Թերեք: 28.Եղիշե: 29.Քրիստիան: 30.Օբ: 31.Դիաս: 32.Թո: 36.Ավելորդը: 37.Չերազ: 39.Նատո: 41.Երեւան: 43.Հաշեկ: 44.Եռալ: 45.Արփի: 46.Հարդ: 47.Մե: 48.Սերո:

ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445